ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2016թվականի N 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 10 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,Հնաբերդ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու արտահերթ թիվ 10 նիստի օրակարգը.
1.Հնաբերդ համայնքի 2016 թվականի վարչական բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ
2. ՋԱՔԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳՆԵԼ
4. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Հնաբերդ, 098025050, ararathnaberd@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հոկտեմբերի 2016թվականի N 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2016 թվականի վարչական բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

Եկամտային մաս

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թ.-ի հուլիսի 21-ի № 755-Ն որոշման 5-րդ կետը, ՀՀ Արարատի մարզպետարանը /այսուհետ սուբվենցիա տրամադրող/ Արարատի մարզի Հնաբերդի համայնքային բյուջեի «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով /այսուհետ սուբվենցիա ստացող/ հատկացրել է 4 000 000 /չորս միլիոն/ ՀՀ դրամ՝ Հնաբերդի գյուղական համայնքի մշակույթի տան համար գույքի ձեռքբերման նպատակով:
2. Հատկացված 4 000 000 դրամ գումարից 2 245.0 հազար դրամ տալ վարչական բյուջեի եկամտային մասի «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» կետին և սահմանել 2 245.0 հազար դրամ:
3. Վարչական բյուջեի եկամուտները ավելացնել 2 245.0 հազար դրամով և սահմանել ընդամենը 16 373.6 հազար դրամ:

Ծախսային մաս

1. Վարչական բյուջեի ծախսային մասը ավելացնել 2 245.0 հազար դրամով և սահմանել ընդամենը 16 373.6 դրամ:

2. Ավելացող 2 245.0 հազար դրամ գումարից 2 170.0 հազար դրամը հատկացնել Վարչական բյուջեի ծախսային մասի 08.02.04.51 (Մշակութային միջոցառումների իրականացում) գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4269 (Հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին, 75.0 հազար դրանը հատկացնել նույն գործառնական դասակարգման մեջ նախատեսված 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԴԱՎԹՅԱՆ ԴԵՐԵՆԻԿ

2. ՋԱՔԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳՆԵԼ

4. ՍԻՄՈՆՅԱՆ ՎԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ